

U P P E R L A B O R S

**Պատամիանատու  
ՅԱՎԻԱՑԵԼՈՒ ՓԻԼԻՃԵՄ**

# ՕՓԱԳԻՐ ԶՄԵՐԾՆԱՑ

Նամակը ուղղելի է Ե  
առ. Ղ. Գ. Պայտագարեան

# ՔԱՂԱՔԱԿԱՆ ԲԱՆԱՏԻՐԱԿԱՆ ԵՒ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ

ԳԱՆ-ԱՄՆԵՐՈՐԴ ԱՊԱՀՈՎԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ԶՈՒԹՎԱՆԻ ՀԱՐԱՄ 14 ՀՀԱՏԵՄԱԲՐ 1880

**Phi Beta Kappa**

# THE CROWN

ԱՆԳՂԻԱ : Արևելեան խնդիրն երթարով կըն  
ճռալի կերպարանք կ'առնու չնորհիւ Պ. Կլէտս-  
թընը աշխարհավարութեան : Այս մասին թէեւ  
հեռագիրներն աւելի լուսվիւն կրպահեն քան  
ճշկութիւններ յայտնեն : Առկայն երրորդական  
թերթերու մէջ հրատակարանուած քննադատական  
բազմաթիւ յօդուածներ ըստ բաւականի տե-  
ղեկութիւններ կուտան : Յիշեալ թերթերէն  
խիսն քիչերն Պ. Կլէտսթընի յատակագիծն իբր  
կարև որութիւն ունեցող կընկատեն , իսկ շա-  
տերն Օսմաննեան կառավարութեան իրաւանց  
խիստ նպաստաւոր կըխօսին : Այս թերուգէմ  
խմբագրութիւններէ կ'իմացյուի թէ՛ Պ. Կլէտս-  
թընի արգի ընթացքին նպատակն ոչ պատերազ-  
մական միտում , և ոչ նպաշարման ձգտում ունի  
Օսմաննեան երկրին գէմ : Իւր նպատակն աւելի  
յայն կընայի՝ որ կայսերական կառավարութեան  
հասութից այդրիւրը փակելով , տեսակ մի սովոր  
միջոցաւ հարկագրէ զնա Եւրոպիոյ առաջարկու-  
թեանց առջև զիջանիլ . Կըկարծուի . թէ սոյն  
նպատակն պիտի տարածուի մինչև անգամ Պետ-  
տութեան բազմահանույթ գաւառներէն մի քա-  
միններն արգիլական վիճակի մէջ դնելու , ինչ-  
պէս Զմիւռնիա , Թէսաղոնիկէ , թերևս ուրիշ  
կարե՞որ ծովեզերեայ քաղաքների ևս , որպէսզի  
ասոնց մաքսատուրքերն ժողովէ յօդուած եւրո-  
պական պարտատեալց : Սոյն խնդրոյն վրայ  
անգիտական Տէյլ - նի - լ լրագիրն ընդարձակ  
խօսելով կըյարէ թէ՛ Անդգիւյ աղատական նաև  
նամակագրութեան գլուխն Օսմաննեան մաքսատուր-

Քերու վրայ այս կերպ ձեռք դնելը, բաւական  
չհամարելով՝ պէտք է Տարտանէլի նեղացի մօ-  
տերը ևս աչքէ անցունել, որով՝ լիշեալ, աղաստա-  
կան թերթը յոյժ հաւանական կրկտնէ որ կայ-  
սերական կառավարութեան ստիպողաբար տա-  
խու հաւանութեամբն Արևելքան ինդիրն յաջ-  
ղապէս պիտի լուծուի :

Եւրոպական իրագործիւնք սոյն նիւթին վրայ  
կը յաւելուն յայտնել թէ՝ Անդ զիոյ նախարարու-  
թեան սոյն առաջարկութեան նուսիայէն և ի-  
տալիայէն զատ միւն տէրութիւնք անհաւան  
կտնուեր են. Պահպանողական լրագրութիւնք  
ևս կը պնդեն թէ տակածէն տեղի կայ յունացու-  
որ Արևելեան խնդիրն հարելի է բարեկամօրէն  
ըուծել ինչպէս կը փափագին ոչ միայն Գերմանիա  
Աւստրիա և Գաղղիա, այլ նոյն իսկ և Անդ զիոյ  
ժողովուրդն .

Մինչ եռ Անդ զիսյ խորհրդարանը փակ է ;  
կլիմաւոր նախարարք Պ. կլէտսթընի տունը հա-  
ւաքուելով խորհրդակցութիւններն կըշարու-  
նակեն, և Արեւելեան խնդրոյ մասին վերոյիշեալ  
որոշումներն կ'ընեն : Հարկաւ այդ պիսի որոշում-  
ներ պիտի շտային՝ եթէ Բ. Դրան վերջին ծանու-  
ցագիրն՝ այն է Տուիմինեօն առանց որևէ պայ-  
մանի Մօնթէնէ կրօյի յանձնելու յայտագիրն  
կանխաւ իրենց հաղորդ ու ած լինէր :

թիւն ածել մինչև Տուրքինեօյի սահմանները՝  
անկարող պլիտի լինի սակայն միեւնոյն միաբա-  
նութեամբ ձգել զանոնք մինչև Վոսֆորի կամ՝  
Տարտարնէլի մօտերը, որովհետեւ եւրոպական  
միաբանութիւնն այդպիսի դիտաւորութեամբ  
կազմուած շեր. վասնորոց Պ. կլէտոթնի խստու-  
թիւնն պատճառ պիտի տայ որ նոյն ներգալինա-  
կութիւնն խսպառ ցրուի, և Ասդզիւց առաջին  
սահմարաբն միսակ մնայ .

—Մեր նախընթաց թուով ձանուցած էինք  
իրանտիսյ մեծահարուստ հողատէր լորտ Մուն-  
մօրի անխնայաբար խողիսողումը , այժմ կառա-  
վարութիւնն 1000 սիէրլին ոսկի վարձք տալ  
խոստացեր է յլշեալ եղունագործութեան հե-  
ղինակը գտնելու համար ; իսկ սպանութեան  
խորհրդակիցներուն ևս լիակատար ներսողութիւն  
չորհել խոստացեր է եթէ եղեռնագործներուն  
գտնուելուն համար կարևոր տեղեկութիւններ  
տալ յանձն առնուն :

Քաղաքացի Գերմանիան ԱԵՌԵՐԵՒՆ

Գերմանական վերջին թերթերու գրուածքին  
նայելով՝ կ'երեփ թէ Գերմանիա ևս կ'ակախ Արե-  
ւելքան խնդրոյն աւելի կազեղութիւն տալ-  
Նայի օնաւ Յայլին կը այս մասին երկար յօդուած  
մի կ'ամփոփէ, որուն վերջաբանիս մէջ հետե-  
աւը կը կարդամք.—Ահա այժմ հասուած ենք մին-  
չև այս կէտը՝ յօրում պիտի շգտնուի գերմանա-  
ցի մը, որ առաջուան պէս անտարբեր լինի, ա-  
ռարկելով թէ՝ Արևելքան խնդիրն բնաւ Գեր-  
մանոց շվերաբերիր: Օրըստօրէ զգալի կը ինի  
թէ այս խնդիրն ո՞րչափ մօտ յարաբերութիւն  
ու ոք մեզ հետ: Անգ զի՞յ և Ոուսիոյ միայնումը

## ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

በኢትዮጵያዊነት

Տես լրագրուս 1146—1147—1152 թիւնը.

Այսպէս ահա աշխատութիւնն ամեն հասակէ  
աւելի երիտասարդ անկան հասակին մնունդն և ի  
բարոյականութիւն ուղղիչն է :

Ֆլորֆան՝ գազզիական Ակադեմիայի իւր անդամակցութեան առթիւ խօսեցած ճառին մէջ աշխատութեան վրայօք հետեւել կերպիւ կ'իւ մաստամիրէ .— Եթէ Է աշխատութիւնն ամեն հասակի մէջ մարդը երջանիկ կ'ընէ , այլ այն առաւել կարեոր է երիտասարդ ական հետակին , Քանզի երբ ամենակերպ բուռն կիրքերն ուժգին կըմաքառին տկանը հանճարի մը դէմ . Երբ անպաշտան և անպարիսալ միրտն ինքզինքը ամեն կերպ մոլար հաճոյից կընուիրէ , Երբ նորանոր յուղմանց անյագօրէն փափագող Հովհն բնապէս կըսաւառնի ընդ առաջ ամեն կերպ հաւճութեց իր զինքը գոհացնել կըխոստանան : Ֆիշդ . այն ժամանակն խիստ կարեոր է . երիտասարդ ական անհանգարտ գործունելութեան յագեցուցիչ ճարակ և սնհինդ մատակարարել . և նորա բուշավառ եռանդը յօզուտ ի կիր արկանելու համար պէտք է զայն դէպ ի օգտակար նպատակ մի ուղիւլ , փափատելով նորա կետնքի վրայէն ամեն ձանձրութիւններ , որոց զկնի շատ անդամ յարակից են մոլութիւնք :

Մեր երիտասարդք ուսանիլ պէտք են թէ՝ ինինց հասակին բնական կիրքերն առաւել բռուռն են քան ուրիշ որևէիցէ հասակի մէջ . թէ՝ այս բռուռն կիրքերն ուժգին կերպիւ և անդադար կը մաքառին իրենց հանճարին դէմ, որ շատ զօրաւոր չկընար ըլլալ արիւնային ըմբուռ յուղանց քերմամբ : Ուստի իրենց տկար հանճարն, ինչպէս իրենք և՛ շատ անդամ փորձը տեսած

են, ստէպ կըյաղթահարուի բուռն կրից արշան  
ւանքէն, որով ահագին սխալ մի կըդործեն, ու  
բուն դարմանը թերեւս անկարելի ինի :

Մեր երիտասարդք իմանալ պէտք են նաև  
թէ՝ իրենց հասակի շրջանին մէջ կըկրեն մի  
սիրտ, որ պաշտպան մի չունի, կըկրեն մի սիրտ  
որ ամեն կոչմերէ բաց և անցանկ անդաստանին  
մը կամ անպարիսպ յարկի մը կընմանի. ուր առ  
մեն կողմէ կարող են թշնամիք ներս բուժել, և  
ամեն բարութիւն, կամ բարոյականութեան  
սերմունք և այլն աւեր և ապականութիւն գարը  
ձունել. Աւելորդ չէ ըսել միանգամայն թէ այն  
անցանկապատ սիրտն, զօր կըկրեն, ինքնափառ  
վիագ տենչացող է ամեն կերպ մոլար հաճոյից  
Թող խորհին ուրեմն թէ որչափ գ. ժուարին է  
զսպել զայն իր սեպհական վիճակին մէջ.

Մեր երիտասարդք իմանալ պէտք են թէ  
այն հասակին մէջ հոգի մը կրվին որ ժուժկաշ  
լը չդիտեր, որ և ոչ երկվայրկեան մի նիրհել  
կամ հանդարտիլ կրնայ, այլ անդադար շարժ-  
ման մէջ է, և զարմանափի գործունէու թեան  
բոցով այսպէս վառուած մինչ զի իւր տաղաւա-  
րին մէջ կարծես թէ չկրնար և չկամիր բովան-  
դակուիլ, կըհետէ, կ'ըմբուտանայ, կրակի,  
սուրի, վտանգի առջե կըխոյանայ, և չընկրկիր  
Փոքր գործեր չեն սփոփեր զինքը. փոքր նպա-  
տակները կ'արհամարհէ, դժուարին և անմա-  
տոյց մեծագործութեանց հետամուտ՝ աննահան-  
չելի կերպիւ անոնց ետևէն կըխոյանայ և կամ  
մասնաց գագաթը կ'ենէ, զամ գերեսամանին

Քանի վասնգաւոր հասակ է երիտասարդ ուժիւնն երբ իմաստութեան Մենտորէ շառաջնորդուիր : Բիւրաւոր մահեր , բիւրաւոր անկումներ և կորուստներ վկայեն բանիս , և հետեւութիւնն ինչ է եթէ ոչ անապան զեղջ , անօպուտ ապաշաւ , դառն ուրբ :

ի՞նչ է և ի՞նչ կրնայ լինել այս տիսուր իրողութեան առաջքի առանոլ դարմանն եթէ ոչ ֆլորիանի իմաստափրած խօսքին համեմատ պէտք է ելիուսասարդական անյացուրդ և անզուսպ ոգույն սեւդհական գործունէութիւնն չժողովուր որ ինքնովին ճարակ դանէ . քանզի անոր վիստրած ճարակը վնասակար և վտանգաւոր է . այլ օրինաւոր ճարակ և սսունդ ջամբել նմա , չժողովուր որ այն գործունէութիւնն անսուազ մնալով առօրէն պահանջումներ ընէ , և վնասաբեր գործողութեանց ձեռք կարկառէ : Այլ պէտք է իմաստուն Մենտորի մը առաջնորդութեամբ ուզգել զանի դէպ ի օգտակար նպատակներ . նորա անդուր գործունէութիւնն յուգուտ ի կի՞ արկանելով :

Այս գրութեամբ աշխատութիւնն փրկիչ է երիտասարդութեան . կ'ապահովէ զանի իւր յարակից վտանգներէն . կ'ամրացնէ և կըպարսպէ նորա սիրտն ու ողին ամեն մոլար հաճութեանց դէմ, Մանաւանդ՝ կ'զբաղեցնէ զանի մարդկութեան վայելուշ և օգտարնը գործերով, Եթէ տդէտ է մեղսւաշան երկասիրութեամբք գիտուն կըլլայ . եթէ աղքատ է շահավաճառութեամբ կըճոխանայ, եթէ փափկակեցութեամբ տկարացած է աշխատութեան չնորհիւ կ'առողջանայ, կըկաղդուրի և քաջապինդ մարմնոյ միերջանիութիւնը կըվայելէ . Սոյն նախնական օգուաներուն հետևանքն եղող օգուաներն առաւել ևս երանաւէտ կընեն զինքն, գիտունն իւր տաղանդին չնորհիւ, ճոխն իւր քանքարներուն չնորհիւ, քաջառողջն իւր կորովի մարմնութն Ազգին և մարդկութեան օգուաները ընծայելով յանապատումն երջանկութիւնն կ'զբայ իւր սրտի խորերուն մէջ :

Այսափ կենաքեր է աշխատութիւն, և այս-  
չափ շար է անդորրծութիւնն :

տոարակոյն չկայ որ թէ Աւստրիոյ և թէ մեղի  
վնաս է : Ուունիա՞Մօնթէնէկրօյի պատրուակաւ  
երեն համար տեղ կըպատրաստէ Աղբիականի  
կողմերն : Ուունիոյ սոյն ընթացքն բաւական  
ազգեցութիւն պիտի ունենար Աւատրիոյ համար  
եթէ Պոսնիա և Հերզէկովին դեռ ևս Սուլթանին  
կառավարութեան ներքեւ գտնուած լինէին :  
Սոյն դէպքերն թէ ծովու և թէ ցատաքի նկատ-  
մամբ մեծ կարևորութիւն կ'ընծայեն : Դիտել  
արժան է նաև որ այս կարեորութիւնն կրկնա-  
պատիկ կըմեծնայ եթէ Անգղիոյ և Ուունիոյ մի-  
աբանութիւնն հաստատուի : Տարակոյս չկայ որ  
Անգղիոյ ծովային զօրութիւնն յոյժ գերազանց  
է Աւստրիոյ վրայ , և որ յոյժ գիւրութեամբ կա-  
րողէ Տալմացիայի եղերքները վտանգի ենթար-  
կել : Եթէ այս կարծիքներն ճիշդ են , զարմա-  
նալի իմն է որ Իակովա , Կրօլօվա և Աւստրիա-  
կան ուղիշ նաւահանդիսաներ այժմ կ'ծփնեն  
Մօնթէնէկրօյի ընդարձակման , որ քիչ ժամա-  
նակէ զինի անուղղակի կերպիւ պիտի նեղեն  
զԱւստրիա : կ'երևի որ Անգղիա աչք ունի Աղ-  
բիական ծովին վրայ , և կ'ուզէ Տաճկաստանի  
ճամբաներով տակաւ առ տակաւ մօտենալ ճիշդ  
այն տեղերուն ուր Աւստրիա տեսակ տեսակ  
պարագայներով մեծ շահ ունի : Սակայն Անգ-  
ղիոյ ազգեցութեամբ Աւստրիոյ վնասուիլը նոյն  
իսկ մեզի (Գերմանիոյ) վնաս է : Վասնդի մեր  
դէպ ի Արևելք հաղորդակցութեան ճանապար-  
հը Աւստրիայէն է : Այս ամենը նկատելով կը-  
յուսանք որ ամեն գերմանացի լաւ պիտի ըմ-  
բռնէ թէ Արևելքան խնդիրն ինչ աստիճան կա-  
րեւորութիւն ունի մեզ համար :

— Հռովմէն դէպ ի Պէրլին քաշուած հեռա-  
գիլն կըծանուցանէ թէ՝ Հռովմի մէջ Օսմանեան  
գեսապան Թուրքան—Պէյ Կ. Պօլիս կանչուեր է  
թերեւ մեծ պաշտօնի համար :

— Բէդրպանւրկի Նիէ Յայտ լրագրէն Կ'թմա-  
նամք թէ Սիրերիոյ երկաթուղին մօտերս կսկսի  
շինուիլ Եկատէրինէնպուրկէն մինչև Թիումէն  
երթալու համար :

ԿՈՍՏԱՆԴԻՈՒԹՅՈՒՆ

կայսերական կառավարութիւնն ներկայ գրժ-  
եւարութիւններն ժամառաջ բառնալու մասին  
իւր նախորդ ծանուցագիրերու մէջ ցոյց տուած  
անկեղծ փափաղը գործնականապէս հաստատե-  
լու մոտք Տուլյիներոն Մօնթէնէլրոյի առանց  
պայմանի յանձնելու որոշում ըրած և սոյն որո-

շումը գեսպանաց հազրող ած է, իրաւամբ յուշ  
սալով որ աէրութիւնք ևս իրենց կողմէ վերջ-  
նական կերպիւ ի բաց կը թողուն նաւային ցոյցը  
զոր կը խորհին միւս առ կախ խնդրոյ կամար :

8ուլշինեօն Մօնթէսէիրօյի յանձնելու որոշումը ծանուցող գրոյն մէջ Բ. Դուռն կըյայտնէ եղեր թէ՝ հրաման զրկուած է Վէլի Ինքա բաշային որ Տուլշինեօյի յանձնումը բնադրական միջոցներագ կատարուելու համար Մօնթենէկրօյի իշխանութեան հետ պայմանագիր մի կնքէ :

— կ. Պօլսոյ եղբառնադատ ամենին արձակած վճռագրին համեմատ իշխարիւք Ալի անուն մարդապանն կախաղանաւ սպանութելու և իշք երակու ընկերացիկիցներն Սուլեյման և Եյուլի տանեւ հետական աշարի զվարակապ աշխատութեան դատավարնութեր են : Եշխարիւք Ալի իր երկու ընկերաց գործակցութեամբ ինքն անձամբ սպանած էր Ամերիկացի Պ. Բարսինս միսիօնարն և նորա հայազդի սպասուորը :

— Յունասիան մարդունաւ մի առանց պաշտօնական արտօնագրի Տարանելի նեղուցէն ներս մոննելու ատեն՝ նեղուցին Տեսչութեան հրամանաւ արդի իրուելով քանի մի օր սպասելու պարտաւորութեր է : Յիշեալ Տեսչութիւնն կանխաւ խիստ հրահանդներ ընդունած էր մեծ ուշադրութիւն ընթել նեղուցէն ներս մտնել ուղղող պատերազմական նաւերու վրայ :

—կ. Պօլոյ Վահելի թուրք իրանդիլն իւր սովորականին համաձայն հրատարակած քաղաքական

լուրերու և խորհրդածութեանց պատճառաւ  
Տպագրական տեսչութեան օրոշմամբ 20 օրուան  
դադարման դատապարտուած ինելով, նորին  
տնօրէն Սիլիք Էֆէնտի կայսերական դժութե  
ապաւինելով ուղակի աղերատգիր մատուցեր

և յիշեալ արգելը ըստ անդորժադրելի մասեր է :  
—Պարսից Շահին հօրեղբայրն Հասնամ—իւս-  
լուլթանա Մէքըքէ ուխտագնացութեան առթիւ-  
ձեռնարկած ուղեկորութեամբ Յատկան ժամանած  
անկէ թիջ կրանքէ շոգենաւովկի . Պօլիս հասած է;  
իր հետն ունելով քառասուն անձինք , Վեհաւ-  
Սուլթանն իմանալով Հասուամ՝ իւս-Սուլթանա-  
յին գալուստը՝ Ասիական կողմի Բայլը ու Կոչ-  
ուած Քէօլիզ նորա բնակութեան համար յատկա-  
ցուց , որ պիտի տեէ , կըսիւի , գրեթէ 10 օր :  
Բարձրաստիճանն Հիւրն Պօլիս մտած օրը Պարս-  
կական գեսապանին ; կայսերական արարժապետ  
Միւնիր Պէյի, Պարսկաստանի Օսմանեան նախորդ-  
դեսպան Միւնիֆ բաշային , Բարիզի ընդհանուր  
հիւպատոս Պ. Թ. Մէնիէի , և Պարսկական գետ-

պատասխան լսորդ գակաս ծեղազ Գէյր կողմասէ  
արքանանավայրել պատռով ընդունուեցաւ Ասկէ  
զատ վեհա. Սույթանին հրամանաւ վեմա. Միւ-  
նիփ քաշայի յանձնուեցաւ ամեն պարտութառ-  
չան պատիւներն ընել վեհա. Շահին հօրեղօրն  
մայրաքաջար մէջ մալու օթերը :

վեհա. Սուլթանը Օսմանիէի ականակուռ  
պատուանշանը Հնորդեց նորին բարձրութիւն  
չառամբիւ - Սուլթանային, իսկ նորին Քեսայ

Հաստամ—իւս ս—Սուլիք անա մայրաքաղաքին  
մէջ հրատարակուող Անթէ ը անուն Պարսկական  
թագավոր Տերոբէնին թանիկագին ալ մի տուաւ :

վեհա. Շահին հօրեղբայրն մինչև Աղէքսանդրիս տանելու համար կայսերական իսպայիլ շոգենաւն որոշուած է և Նորին Բարձրութիւնը Պօլիսէն շմեկնած 10:000 ֆրանք շնորհեց օսմաննեան Յանձնաբանիս որ գաղթականաց ծգնելու պաշտօն ունի Վեհա. Շահին կոչմէ Արեգական և Ասիւծու առաջին աստիճանի պատուանշանը շնորհուեցաւ լինեմ. Միւնթիք բաշային որինորին Վեհափառութեամն հօրեղբօրն մայրաքաղաքին մէջ ասպենշական ընտրուած էր:

## ԱՀԳԱՅԻՆ

Այս վերջին ատեններս բաւական ծանրակշռական լուր մի տարրածուած էր թէ՝ Բ. Դուռը Հայոց Պատրիարքարան՝ հրամանագիրը յուղարկած է այսուհետեւ պաշտօնական գրութեանց մէջ Հայաստան բառը, որ Հայ աղդի հայրենեաց պատմական և աշխարհագրական անունն է; շառնուր ի կիր, և գալարական խսդիրներուն համար միջնորդութիւն չընել: Սոյն մեջինութեամբ Հայ աղդի Պատրիարքութիւնն գրեթէ զրկուած կը լինէր այն կարևոր արտօնութենէն; զօր դարերով առաջ ընդունած էր յաւերքայիշտակ աշխարհակալ Ֆեթիհ Սուլթան Մէհմէտ Բէն: Ուստի իրաւամբք պէտք էր գիմել Օսմաննեան բարեխնամ կառավարութեան մարդասիրական շնորհացն, ինչպէս որ ըրաւ Կ. Պօլսոյ Ամենա. Տ. Ներսէս Ս. Պատրիարք Հայրին, և յաջողեցաւ իսկ վերահանաւատել տակ յիշեալ: Պարաւոր աղդային կարեւոր արտօնութիւնն: Պատրիարքական թագրիրն Մասիս լինգգրէն արտատպելով կը հաշորդեմք ի ծանօթութիւն մեր, ընթերցողաց:

## ՊՍԱԿ ՀԱՄԲԵՐՈՒԹԵԱՆ

(Տես լրագրիյս 1451և 152 թիւերի :

Յատուկ խընամք և հոգ կընէ . ո՞րչափ իմ վրայ ուշադիր է :  
Սիրեմ ուրեմն իր խնատութիւն , ո՞ր օդտակար է իմ հոգւոյն :  
Նա մանաւանդ մարդ չէ ատակ երջանկութեան առնուլ ճաշակ  
Մինչ վիշտերու չէ նա տարած ու փորձերով հրահանգուած :  
Սիրեմ ուրեմն իր հայրական սուրբ գլուխութիւնն՝ որ իմ վըրան ,  
Երկրպագեմ և սուրբ Աջոյն , որ գործողն է այս ամենուն :

b

Պատճ վիորձ Ա. յափշտականքին

Տեսաւ իշխանն թէ դարուհի ինչ ջերմ սիրով կըխճաքի  
իր դժնդակ հրամաններուն , բայց գեռ կատկածն էր միւնոյն և  
Այս կեղծաւոր սիրոյն , կ'ըսէր , ես կըտեսնեմ հիմն անլաւեր :  
Քաջ կ'իմանամ արդ թէ ինչո՞ւ այս խիստ փորձերս չեղան ազդու  
Քանզի անոնք գացին զարկին Դարուհիին անանկ կողմին՝  
Աւը տեղ շըկայ ու շըբնակիր իր եռանդուն սէրն համակիր :  
Այլ ես գիտեմ իր սէրն ուրի է . իր միածին զաւկին վրայ է ,  
Խանդաշակաթ կիրք իւր և սէր մեր վառվառէ միակ դատեր  
Վըրայ դըրած՝ ալ փոյթը չէ շուք և պէրճանք որեիցէ :  
Զինք փորձելուս մէջ յաջողիլ եթէ երթէք կրնայ լինիլ  
Պէտք է բնուն այն տեղն յարձակիմ , գիրկէն մանկիկն կորզէմ աւանդում  
Որով ամեն պատրանք կեղծիք յերև կուգան , չնար կարծիքն :  
Դեռ Դարուհի նոր էր հանած զաւկին բերնէն իր ծիծն բատեանց  
Մանկիկը կուշու , զըւարթ , կայտառ մօրը բաղկաց մէջ կըխայտար  
Սիրուն մատներն մօրը կուրծքին , աղու աշերն մօրը դէմքին  
Վըրայ անբաժ մինչ կաթոգին գեղաժըպիտ կըխայտային .  
Եկաւ իշխանն առ Դարուհի կ'ըսէ ձայնիւ սպառնալի  
Այս կըտեսնեմ . որդէգորով կին մ'ես գու որ անյագ սիրով .  
Կըփայփայես և կըդ գուես մեր վառվառէն հրեշտակատես :  
Այս է քուկին սուրբ տուարկայ , սէրըդ միայն է ասոր վրայ ,

ԹԱՂԲԻՐ Ս. ՊԱՏՐԻԱՐՔ ՀՕԲ  
Ա. Բարձր առաջն Նախարարն, Նայլ  
թարձրապատճե ՏԵՐ :

Ընկալայ Զեր Բարձրութեան Օգոստ. 30 և Պետք  
4 ամսաթուռվլ կրկին ծանուցագրերն, և պա-  
տասխանի մեր այս կրկին թաղթիքներն, զբա-  
պատիւ ունեցած էի Յուլիս 30 և Օգոստոս 27  
ամսաթուռվ ուղղել Զեր Բաշըրութեան և ա-  
ռաջնով Զեր Խորին աշադրութեան յանձնելը.  
Պօլիս գտնուող Վանպուրականցի ազգայնոց մի  
հանրագիրն, որու թարդ մանութիւնը հաղորդած  
էի Ներփակեալ, և Երիրորդի ով գանգատած էի  
Թուրք մամուջին նկատմամբ, որ Հայոց աղդին  
դէմ յարձակաղական յօդուածներ կը հրատարա-  
կէ, գոյնուչ և թշնամական լրդուով; և խնդրած  
էի որ ըստ օրինի և առջնորդթեան աղդ արարու-  
թիւն Մուղղուի այդ թերթերաւն որպէսզի բ-  
ընթացքը ուղղեն :

Զեր Բարձրութիւնն իւր կրկին ծանուցակրես  
ըսպ զորս ուշի ուշով նկատողութեան աւել  
կրյայտարարէ թէ Հայաստան բառն՝ որովհաս  
պուրականի աղքայինք անուանած էին իրենց  
հայրենիքն յիշեալ հանրագրին մէջ, չերնար ըն-  
դունուիլ պաշտօնական լեզուի մէջ, թէ այդ  
հանրագրին բնագիրն ըստ որում Պատրիարքա-  
րանէն պահանջուած է և չէ յանձնուած և թէ  
միանդամայն անոր մէջ գէպքեր ճշդուած չեն  
յարուցեալ գանգամները թշնամական կրից  
արդիւնք են, թէ այս տեսակ գանգամանաց  
համար Բ. Դրան քով մեր միջնորդ ութիւնն ըս-  
տդտանաց արժանի է, թէ Պատրիարքին պաշ-  
տօնն կայսերական հրովարտակով և նոյն իսկե  
Հայոց աղքին Սահմանագրութեամբը սահման-  
ուած ու գծուած է, և Պատրիարքը չունի եր-  
բէք ըստ կանոնի միջնորդութեան թյաւասու-  
թիւն մը. հետեւարար Զեր Բարձրութիւնը կազ-  
դարարէր մեղք բոլորովին դադրիլ այսուհետեւ  
այս տեսակ միջնորդութեան պաշտօն մը կատա-  
բելէ :

Հարկ չկայ ջեր թարձրութեան բացատրելով  
թէ Հայք բազմադարեան հայրենիք մ'ունին  
որու անունը Հայաստան է, աշխարհ համօքէն  
այդ անունով կը ճանչնայ դայն, և պատմու-  
թիւնն ու աշխարհագրութիւնը նուիրած որ-  
ծած են այդ անունն ։ Նոյն իսկ պաշտօնական  
աշխարհացոյց քարտէներ, որք կայսերական  
կառավագիութեան վաւերացման դրումը կը կրեն  
Հայաստան անունով սահմանած և գծած են

10

Առաջնաց վաճք'

Գալղաքին մօտ կար մի մեծ վանք իր հընութեամբ գերահոչչակ ;  
Ուր խառակրօն շատ կուսաններ հարսունք ուխտի երկնանըւէր  
իրենց ընտիր մարտագետին հսկողութեան տակ կ'ապրէին :  
Թադ-աւորին հըրամանաւ այս վանքին դուռը տարուեցաւ  
Փոքրիկ մանուկն արքայական գաղտագոյի ու լուելեայն .  
Առանց տոհմին փառքն յայտնելու, բայց ճոխութիւնք չէին հեռու ;  
Յոյժ ծանրագին մատանիներ ծրաբուած կային իիր ի նըւէր ,  
Վաւերական քարաւէն մ'ալ կար մեծ մեծ վարձուց խոստմանց յետկար  
Փոխան խնամող և կրթութեան մայրանըրան այս հէք մենկան :

七

Դանեն փորձ Բ. քօթ մահու

իր չափազանց անգըթութեան վըրայ մեծ ցաւ կ'զգար իշխանն  
Մըտաց խղճի հարուածներով շրջիոթուած նիրան աղէսօրով  
Բայինիքելու նըպատակաւ կըպարապէց յորս և յարշաւ :  
Ինչպէս սոսկիամբ մարդ կ'երկնչի երթալ մօտիլ մատակ վագրի  
լրմէ կորինն է առնուած ահեղ գաղանն է բորբոքած :  
Այսպէս իշխանն անդմըկայող իշխանուհւոյն որդեկորոյս  
Յովլ երթալ կըզանդիտէր բայց իր կասկածն անոնի էր :  
Փեր ահիւ թանգուկերով իշխանուհւոյն մօտեցաւ քով,  
ը կարծածին բորդ ներհակ տեսաւ անկէ սէր և յարգանք  
նդ դարուհւոյն զարմանալի համբերութիւնն ու հեղոսի  
աղջըր հրատոյը մի կըթուրէր կըներշնչէր և անթիծ սէր  
հշդ հաւասար այս սուրբ աւուրից յոր կըսակին աւունեթով լուծ  
ո թափաղարդ երկանը հետ կ'ուրախանայիր երջանկաւէտ :  
Դումիցաւ իշխանն անդէն կիրք կըյուղուին իիարու դէմ ;  
Տօթ դորով և տիտանութիւն բայց գեռ կասկածն էր անսըկու  
սոտի երկու օրէն եռև կեղծ արցունքներ կարկըտաձև  
շերը լի կուգայ առ նա , որ մեծ հարուած մ'ալ սրտին տայ  
Աւադ , կրսէ , անսագորուն մահն առներոյն մեր միրասուն

Հայոց հայրենիքն՝ իբրև մի մասն Օսմանեան  
երկրին, չետևաբար Հայաստան անունը՝ ոչ ի  
չեղոյէ հնարուած և ոչ նորաստեղծ բառ մէ՛, և  
չկրնար անշուշտ յանշանք համարուիլ. Եթբ Հա-  
յերն ևս իրենց հայրենիքն յորջորջեն իւր բնիկ  
անունով: Այս մտածութեամբ Հայոց ազգն և  
իւր Պատրիարքարանը կըդորժածեն Հայաստան  
անունը պաշտօնական թղթոց մէջ: Նման Քիւր-

ախնտան, Լաղիստան և կիւրծիստան անուանց։  
Վասպուրական Հայոց հանրագրին բնագիրն,  
նառը գլուխ, խնդրուած էր Պատրիարքարանէս՝  
պաշտօնէի մը միջոցաւ . սակայն նոյն հանրա-  
գիրն իմ քով կը դատնուէր, և ըստորում այն մի-  
ջոցին բացակայ էի ես Պատրիարքարանէն, այս  
պահեճառաւաւ չէր կրցած նոյն հանրագիրը հազոր-  
գութիւն ներկայացաղ պաշտօնէին : Այլ սակայն  
այն առաջին անգամն էր որ մի այս տեսակ պա-  
հանջում տեղի կունենար, զի մինչև ցարդ Բ  
Դուռը չէր ուզած երբէք այն հանրագրերուն  
բնագրերն օրոց մերթ թարգմանութիւնն և  
մերթ բովանդակութիւնը Պատրիարքարանիս  
կողմէ հաղորդուած էին իրեն . հետեաբար  
հարկ ըլլալով՝ և ախ այս պահանջման շաժառութիւն  
իմանալ, տեղեկութիւն խնդրած էի այս մասին  
և հայուսէի առանձիւնի :

Այդ հանրագրին մէջ , ինչպէս գիտել կուտայ Ձեր խարձութիւնն , զեղծմանց և բռնութեանց մանրամասնութիւն չկայ . սակայն արդ գէն բազմաթիւ Թագրիրներով Բ. Դյան ծանուցուած են թէ Հայոց գանդատներն ինչպատճառներէ կընին և որո՞ց գէմուզչեալ են իսկ այս վերջին հանրագրին նպատակն էր խնդրել պարզապէս գործադրութիւնն այն բարենորդմանց՝ որք խոստացեալ էին , և որոց Հայոց ազգը կ'սպասէ ամէնկառոց . ուստի բնական էր որ այդ հանրագրին մէջ չկրկնուէին արդէն ծանուցեալ գէպգերու մանրամասնութիւններն :

վաստուրածկանի Հայերն ուղիւ քանի մը գա  
ւառնեցու ժողովրդեան նման՝ կըտեսնէին որ  
Երենց հայրենի երկրին մէջ շատ տեղեր ապահո  
կութիւն և անդորրութիւն կ'ավակօֆ էըտեսնէին  
որ խոնսացեալ բարենորոգմանց իրացումն օր  
քան զօր կըյապազի, և արդարութիւն չըլլար  
իրենց՝ երբ տեղական վարչութեան կըդիմեն  
իրենց ցաւոցը համար, կըտեսնէին որ Թուրք  
մասուլը ընդհանրապէս բարենորոգմանց գէմ  
կըդիմի վասնաբեր հրատարակութիւններով  
ուստի յուսաքեկ իսձ կըդիմէին ստէպ իրենց  
միջակին դարձան խնդրելով։ կըյուսադրէի զի

բեն միշտ թէ իրական և կատարեալ բարենք  
բոդումներ պիտի դան միտրջ տալու իրենց ցաւոց՝  
և թէ օգոստա Սուվմանին բաղձանաց մի միակ  
առարկայ եզած է այս, և այսպէս զիրենք ի  
համբերութիւն կըյորդորէի ։ աակայն բողոքար-  
կու ժալուխուրդը յուսատու յայտարարութիւն-  
ներէ զատ՝ որևէ իրական արդիւնք մը չտեսնե-  
լով, այս անդամ այդ հանրագրով իւր ցաւերը  
յայտներ էր մեր Ազգային երեսիովանական ժո-  
ղովն, որ արձանագրելով այդ հանրագիրը  
իւր ատենագրութեան մէջ, ինձ յղեր էր զայն  
որպէսզի տնօրինեմ ինչ որ արժան է :

Այս պարագաներէն գիւրին է ըմբռնել որ  
եթէ անտարբեր դտնուէի մի այսպիսի աղերսա-  
նաց առջև, և չփութայի Հայոց հանրագրին օ-  
րինակը մատուցանել որու որ անկ էր և կամ  
շատանայի անոր մէկ քաղաւածոյն միայն հաղոր-  
դելով, աղերսարկու ժողովուրդն՝ որ այնքան  
վշտօք և տուայտանօք համակուած էր, պիտի  
կասկածէր թէ իւր աղերսանաց կարեռութիւն  
չեմ ընծայեր ես :

Զեր բարձրութիւնը գիտէ անշուշտ որ երբ  
երկիրն արտաքյ կարգի տադնապի մէջ ինկաւ  
և զանազան ծանր գէպքեր յաջորդեցին իրա-  
րու, ևս էի՞ որ իրը միջնորդ Տէրութեան և  
ազգիս մէջ, յորդոր կըկարգայի ստէպ ժողո-  
վրդեան որ անեղծ պահեն լիբենց դարաւոր հա-  
ւատարմութիւնն առ Պետութիւնն Օսմանեան .  
ևս էի՞ որ յօրդոր կըկարգայի որ տէրութեան  
գոյութեանն ու փառաց պահպանութեանն հա-  
մար չնայեն ինչ զոհողութիւն որ կընան ընել  
անձնապիս և նիւթապիս : Այս ընթացքս ա-  
պարգիւն և անծանօթ չմնաց նոյն իսկ օդոստ.  
Սուլթանին, և Նորին կայսերական Պէհափա-  
ռութիւնը գնահատելով զայն , չնորհ ըրաւ  
յայնժամ զիս իւր ներկայութեանը կոչել, և ար-  
ժանի ընելով զիս իւր կայսերական մեծարանա-  
ցըն, իւր բարձր գնչունակութիւնն յայտնեց  
Հայոց ազգին հաւատարիմ ընթացից և մատու-  
ցած բազմազան ծառայութեանցը համար , և  
անոր համբերատար ոգին՝ որով այնքան տառա-  
պանացն և թշուառութեանց կըտոկար դիմա-  
գրաւ , գովելով ըսաւ . «Հայոց ազգը արժանի  
պիտի լինի վարձատրութեան և պիտի օգտի այն  
բարենսորոդումներէն՝ որոց գործադրութիւնն  
ովոչուած է» : Կայսերական այս բարձրագոյն  
խոստումն Հայոց ազգն սփոփեց , և այն օրէն  
հետէ կ'սպասէ անձկանօք անոր իրացումը տես-  
նելու : Հետևաբար Հայոց պահանջումն երբէք

Անոյշ զաւակն արփիափայլ սփոռեց մեր վրայ սըդոյ մըռ

Աւազ, մեռաւ մեր զառ վառան տըխուր շիրմկայ այժմ վըրան»  
Անակնկալ այս գառն հարուած ըղիարուէի թողոց սառած,  
Մահանդոյն սիրեց ըստուեր դողտրիկ սրտին վիշտ կարէվէր:  
Բայց տեսնելով զի իշխանին դոյն կըդառնայ անդ զայրագին,  
Այն աղէտքին գառն յիշատակ մտքէն հանել կ'ընէ իր ջանք,  
Ու իշխանին վիշտը կեղծիկ մըխիթ արել կըմ ափէ ճիգ :

۱۹

Զենք ; եւ յամառուս  
Դարուհին այս բարութիւն , ամուսնական և իր սիրոյն  
Այսպէս եռանդը անկըշիո յանկարծ դիշխանն հետաքրքրէիր  
Չինաթափեալ խստութենէն կըթափանցէ սրտին խորէն ,  
Մինչ հարկադրել զանի համակ խոստովանիլ անպատճուակ ,  
Թէ զաւակնին ողջ է տակաւ , և թէ կեզծիք՝ իր սրտին ցաւ :  
Բայց վերստին կըփրփրի մաղք իշխանին կասկածալի ,  
Եւ կ'արգելո՞ւ բանալ ըդքող այս խոր գաղտնեաց վարագուրող ,  
Համարելո՞վ զայն օդականար ուրիշ պատէչ առթի համար :

Enseignement

Ակրոյ հնգետասան տարիներ

Տարւոյն քառեակ եղանակներ յօրինելու համար՝ այս մեր  
Ակնապարար աստղն օրաբեր հնգետասան զատ շրջաններ  
Բընակեցաւ աստեղապերծ իր տասներկու տուներուն մէջ :  
Սիրաշաղկապ լուծին ներքեւ սիրոյ ամոլքս այս յարատե  
Փոփոխակի խանդաղատանք ընծայելով իրար անանկ  
ԶԵՐՄ ու ամբիծ կըսիրելին , որուն ճաշակն , կըսեմ , չունին  
Սիրահար մի ու սիրուծին իրենց խիստ քաղցր իսկ վայրկենին :  
Եւ թէ երբէք մէկ երկու հերկ կիրք շարժելով նշանան ահեղ  
իր ամուսնոյն դէմ սրտմբուէր , անոր պատճառն ուրիշ բան չէր  
Բայց այս միայն որ չտայ թոյլ սիրոյ բորբոքն ինքնին խափնուլ ,  
ինչպէս գործոյն մէջ ժիր գարբին իր նըւազած փուռի կրակին  
Չուր կրսրսկէ , անոր տապոն երկնառաւատիւր ոստորու թե՛ն :

